

# Լեզվական էվոլյուցիա

## Table of Contents

<i>Տեսություն</i> .....	1
<i>Լեզու եւ խոսք</i> .....	2
<i>Լեզվի էվոլյուցիան</i> .....	5
Բարբառ եւ «Լեզվական օրգան» .....	5
Լեզվի եւ խոսքի ժամանակակից ըմբռնումը.....	6
Ինքնապատճենում .....	10
Բնալեզվական պրոցեսները .....	11
Տեսություն .....	11
Լեզվի ձեռք բերում .....	11
Խոսքի սերում եւ ընկալում .....	11
Մայրենի բարբառի էվոլյուցիան.....	12
<i>Կորպուսի լեզվաբանական կարեկորությունը</i> .....	13
<i>Բարբառի եւ ստանդարդ լեզվի հարաբերությունը</i> .....	13
<i>Ամփոփում</i> .....	14
<i>Եզրույթներ</i> .....	16
<i>Գրականություն</i> .....	17

## Տեսություն

Լեզվաբանությունը առնչվող հերթական մի հատոր կարդայու ժամանակ պահանջ գգացի մեկ անգամ եւս անդրադառնալու լեզու, խոսք, մշակութային էվոլյուցիա, ևն հարցերին (տե՛ս մի այլ գրքով ոգեշնչված, միգուցե՝ դրդված, [Hay2023] էջը): Կրկին համոզվեցի, որ որեւէ քիչ թե շատ բարդ հասկացություն չի կարող ընդհանրական, բացարձակ, հավերժական ձեւ (կառուցվածք), իմաստ, կամ սահմանում ունենալ: Նույնիսկ գիտական գրականության մեջ, նույնիսկ պատմական կարճ ժամանակահատվածում:

Ընդգծենք, որ այստեղ քննելու ենք լեզվի մշակութային բաղադրիչի, այլ ոչ թե կենսաբանական գործիքակազմի՝ օրգանների, էվոլյուցիան [Hau2002]: Այսինքն առարկան մասնավոր բարբառի (լեզվի) էվոլյուցիան է: Եթե կենսաբանական էվոլյուցիայի ընթացքում միջավայրի ճնշման ներքո ընտրվում են գեներերը, այսինքն ձեւավորվում է կենդանու տեսակի գենոմը, որի «հրահանգները» համաձայն կառուցվում են անհատ

կենդանիների օրգանները (լեզվական գործընթացները ապահովողների մասին տես [Hau2002]), ապա մշակութային էվոլյուցիայի պարագայում փոփոխվում եւ ձեւավորվում են մտավոր պատկերների (գաղափարների, հասկացութիւնների) կառուցվածքը եւ հարաբերութիւնները: Մասնավորապէս լեզվական էվոլյուցիայի ժամանակ, միջավայրը (որն ընդգրկում է թե ֆիզիկականը, եւ թե մշակութայինը) փոփոխվում է խոսազենը՝ բարբառի բառապաշարը (իմաստույթները), արտաբերումը (ձայնույթները, շարժույթները, գրույթները), եւ քերականական օրենքները:

Այս էսսեն, որը [Hay2023]-ի շարունակութիւնն է [եւ ոչ շուտով գալիք գրքի մասը], բաղկացած է երկու հիմնական մասերից՝ Լեզու եւ խոսք ըստ [Ջահուկյան:18-22] եւ Լեզվի էվոլյուցիա:

Ջահուկյանը լեզվի եւ խոսքի իր ըմբռնման մասին գրել է 50 տարի առաջ եւ, ըստ իս, դա այս երկու հասկացութիւնների տարբերութեան ամենապարզ, ամենազուլալ բացատրութիւնն է:

Լեզվի էվոլյուցիա հատվածն ունի մի քանի նպատակ՝ ա) մեկ անգամ եւս, այլ տեսանկյունից նայել լեզվի եւ խոսքի տարբերութեանը, բ) բացահայտել լեզվական էվոլյուցիայի դերակատարներին եւ հարթակը՝ ի՞նչն է փոփոխվում, ի՞նչպէս է փոփոխվում, ինչո՞ւ է փոփոխվում, եւ գ) հասկանալ, թե արդյոք առաջարկված էվոլյուցիոն մոտեցումը ունի՞ որեւէ գիտական արժեք (նույնիսկ որպէս միայն բացատրութիւն):

## Լեզու եւ խոսք

Գ. Ջահուկյան, [Ջահուկյան:18-22]:

Լեզվի եւ խոսքի մեր ըմբռնումը զարգացվել է Երեւանի պետական համալսարանում կարդացած մեր՝ դասախոսութիւններում եւ առաջին անգամ գրավոր ձեւով ակնարկվել «Լեզվաբանութեան պատմութեան» և հատորում: Խոսելով լեզվի եւ խոսքի հակադրութեան մասին՝ մենք նշել ենք, որ այս դեպքում «բավարար չափով հաշվի չեն առնվում դրանց անցումները», որ դրանք «գրվում են կողք-կողքի, խստորեն հակադրվում միմյանց» [Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանութեան պատմութիւն, և, Երեւան, 1962, էջ. 171 (?)]:

Սոսյուրի ժամանակներից ընդհանրացած այս տարբերակումը ժամանակակից՝ լեզվաբանութեան մեջ գրեթե աքսիոմատիկ բնույթ է ստացել: Այն վերանայելու կամ անտեսելու փորձերը առայժմ գրեթե ապարդյուն են անցել: Պետք է կարծել, որ լեզվի եւ խոսքի տարբերակումը հատուկ է լեզվի էութեանը: Հաղորդման (ինֆորմացիայի) տեսութեան ձեւավորումից հետո առաջ քաշվեց կող-հակողորդում զուգահեռ տարբերակումը, որը յուրատեսակ ձեւով լրացրեց ու հաստատեց լեզու— խոսք տարբերակումը:

Սակայն եթե մի կողմից՝ լեզու-խոսք տարբերակումը թվում է լեզվի էութեանը ներհատուկ, ապա մյուս կողմից՝ մինչեւ այժմ էլ չի կարելի ասել, թե կա այդ տարբերակման բնույթի մասին ընդհանուր ճանաչում զտած պատկերացում: Միաժամանակ՝ ամերիկյան նկարագրական լեզվաբանութեան ներկայացուցիչները առաջին հայացքից կարծես թե «յուրա եւ գնում» առանց այս տարբերակման. սովորաբար ասվում է, որ նրանց ուսումնասիրութեան բուն առարկան խոսքն է: Ինչո՞ւմն է բանը:

Սոսյուրը լեզուն եւ խոսքը տարբերում է հատկապես նրանով, որ առաջինին հատկացնում է հասարակական բնույթ, երկրորդին՝ անհատական: Ճիշտ է՝ սա արդյոք: Ամենից առաջ՝ այս դեպքում թույլ է տրվում հարցի դիալեկտիկական անըմբռնողություն: Խոսքն իրականանում է լեզվական միջոցներով եւ իր բնույթով սովորաբար ենթադրում է ընկալող, հետեւաբար խոսքի եւ՝ նախադրյալը, եւ՝ նպատակը հասարակական են. այսպես կոչված ներքին խոսքն ու մենախոսությունը ածանցյալ բնույթի են, եւ նրանց ժամանակ կիրառվում են այն միջոցները, որոնք առկա են երկխոսության ժամանակ: Երկրորդ՝ լեզու հասկացությունը միատարր չէ: Լեզու ասելով հասկանում ենք գերազանցապես երեք բան՝

1. մարդկային լեզուն որպես մարդուն հատուկ խոսողական կարողություն,
2. ժողովրդի (կամ նրա մի հատվածի) լեզուն որպես տվյալ ժողովրդի (կամ նրա մի հատվածի) ներսում հաղորդակցումն իրականացնող ընդհանուր միջոց եւ
3. անհատական լեզուն որպես տվյալ անհատի հաղորդակցումը հնարավոր դարձնող միջոց:

Ճիշտ է, դրանց միջեւ ընկած են միջակա աստիճաններ՝ պատմական (հմմտ. մի քանի լեզուների համար վերականգնվող նախալեզուները), հասարակական (հմմտ. տվյալ ժողովրդի ներսում գոյություն ունեցող զանազան հասարակական խմբերի «լեզուները»), ֆունկցիոնալ-ոճական (հմմտ. ժողովրդի լեզվի մեջ գրական, խոսակցական և այլ կարգի տարբերակները), տերիտորիալ (հմմտ. տվյալ ժողովրդի ներսում բարբառային, ենթաբաժին ու խոսակցական տարբերակները), բայց դրանց գործողության մեխանիզմը կարելի է հասկանալ մի կողմից՝ ժողովրդի լեզվի մեխանիզմի քննության մյուս կողմից՝ հասարակության գոյության ոչ լեզվական պայմաններով: Այդ պատճառով էլ մենք առայժմ դրանց քննությունը բաց ենք թողնում:

Ո՞րն է լեզվի եւ խոսքի գլխավոր տարբերությունը: Անկասկած այն, որ խոսքը որոշ պրոցես է, լեզուն՝ այդ պրոցեսի նախադրյալն ու արդյունքը: Ըստ Սոսյուրի՝ «պատմականորեն խոսքի ակտը միշտ նախորդում է լեզվին» [Փ. Де-Сосюр, Курс общей лингвистики, М., 1933, էջ 42]: Իրականում այդպիսի հարցադրումը ճիշտ չէ: Խոսքը պատմականորեն եւ՝ հաջորդում է լեզվին, եւ՝ նախորդում: Սոսյուրի եւ նրա շատ հետեւորդների գլխավոր թերությունն այն է, որ նրանք լեզուն՝ եւ խոսքը դնում են իրար կողքի. Սոսյուրը նույնիսկ կարծում է, որ լեզուն «անհատի նկատմամբ արտաքին երեւույթ է, որ ինքնին չի կարող ոչ ստեղծել լեզու, ոչ այն փոխել» [նույն տեղը, էջ 39]: Մինչդեռ հենց այն փաստը, որ վերոհիշյալ բաժանման մեջ մենք տարբերեցինք նաեւ անհատի լեզուն, ինքնին խոսում է այս պնդման սխալ լինելու մասին: Ո՞ւնի արդյոք անհատը իր լեզուն: Անշուշտ: Այն յուրացվում է մանկությունից եւ ուղեկցում անհատին մինչեւ մահ՝ կազմելով ժողովրդի լեզվի մասը: Այդ լեզուն է, որ անմիջապես հնարավոր է դարձնում անհատի առանձին խոսողական ակտերը եւ ընդհանրապես նրա խոսքը: Անհատի լեզուն նրա խոսքի նախադրյալն է, բայց ոչ այդ խոսքի արդյունքը. այն սկզբնապես յուրացվում է ուրիշների խոսքի հիման վրա եւ հետագայում անընդհատ սնվում ուրիշների խոսքով: Այսպիսով, լեզվի եւ խոսքի փոխհարաբերության մասին մենք չենք կարող խոսել ընդհանրապես, հաշվի չառնել, թե ում դիրքերից ենք մոտենում՝ խոսողի, թե լսողի, հաղորդողի, թե ընդունողի:

Լեզվի յուրացման շրջանում ուրիշների խոսքի ընդունումը գերակշռում է հաղորդման նկատմամբ. հետագայում հաստատվում է որոշ հավասարակշռություն: Ինչպես նշվել է, ընկալման պրոցեսը գերազանցապես վերլուծության պրոցես է, հաղորդմանը՝ գերազանցապես համադրության: Այլ կերպ ասած՝ հասկացումը առաջին հերթին վերլուծություն է, հասկանալի դարձնելը՝ առաջին հերթին համադրում: Չնայած համադրության կարեւորությանը՝ կարելի է ասել, որ մինչեւ վերջին ժամանակներս լեզվաբանությունն զբաղվում էր միայն վերլուծությամբ. պատահական չէ, որ հին հնդիկների մոտ քերականությունը կոչվում էր հենց վերլուծություն (vyakarana): Թերեւս մասամբ այս է պատճառը, որ լեզուն եւ խոսքը Սոսյուրը եւ ուրիշները դնում են կողք-կողքի, լեզուն դիտում որպես անհատի համար արտաքին մի բան, որ յուրացվում է նրա կողմից վերլուծության ճանապարհով: Որպեսզի հասկանանք լեզվի եւ խոսքի փոխհարաբերության էությունը, հարկավոր է քննել անհատի լեզվի գործողության մեխանիզմը: Լեզուն միջոցների մի ամբողջություն է, որ հնարավոր է դարձնում վերլուծությունը (հասկանալը) եւ համադրությունը (հասկանալի դառնալը), որոնց ամբողջությունը հենց հաղորդակցումն է: Հաղորդման եւ ընդունման, որպես խոսքային երկու դրսեւորումների, երկրորդ գլխավոր տարբերությունը լեզվից նրա անմիջականությունն է: Կարելի է ասել, որ այն ամենը, ինչ հանդես է գալիս որպես անմիջական պրոցես, վերաբերում է խոսքին. այն ամենը, ինչը դադարում է պրոցես լինելուց եւ դառնում հիշողության պահեստային փաստ, վերաբերում է լեզվին: Լեզվականը խոսքայինն է՝ զրկված անմիջականությունից եւ պահեստացված, խոսքայինը՝ լեզվականն է ստացած անմիջական բնույթ եւ առնված պրոցեսի մեջ: Այս առումով էլ լեզուն եւ խոսքը չի կարելի պատկերացնել որպես կողք-կողքի դրված երեւույթներ՝ լեզու-խոսք, խոսք, խոսք... հաջորդականությամբ, այլ խոսքի հետ միահյուսված եւ նրան փոխհաջորդող՝ լեզու-խոսք, խոսք, խոսք... հաջորդականությամբ: Խոսքի մեջ շատ կրկնվողը եւ հիշվողը դառնում է լեզվի համար բնորոշ, քիչ կրկնվողը՝ անցողիկ: Այլ կերպ ասած՝ լեզուն հնարավորություն է տալիս մարդուն խոսել, խոսելը հարստացնում եւ հաստատում է լեզուն. լեզվական միավորը, ստանալով անմիջականություն, դառնում է պրոցես եւ հանդես գալիս որպես խոսքի միավոր, խոսքի միավորը զրկվելով անմիջականությունից վերածվում է լեզվական միավորի լեզուն կող եւ կառուցվածք համարելը պայմանական է. լեզուն միայն կող չէ, այլ նաեւ հաղորդելի միավորների անընդհատ փոփոխվող եւ հարստացող ամբողջություն, լեզուն միայն կառուցվածք չէ, նաեւ կառուցվող տարրերի անընդհատ փոփոխվող ամբողջություն: Այս առումով մեր պատկերացումը տարբեր է կառուցվածքային լեզվաբանության հիմնական պատկերացումից եւ ցույց է տալիս, որ ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը միայն խոսքը չէ, որ ուսումնասիրում է. այն իրականում քննում է ե՛ւ խոսքը, ե՛ւ լեզուն, բայց անմիջական փոխհաջորդման մեջ (խոսքի միջոցով որոշում է լեզվականը). այնինչ եվրոպական ստրուկտուրալիստները լեզուն առանձնացնում են եւ դնում խոսքի կողքին: Ինչպես կտեսնենք, այս եզրակացությունը խիստ կարեւոր է մեր հետագա քննության համար եւ իր հաստատումն է գտնում մեքենական թարգմանության պրոցեսի մեջ:

Լեզվի եւ խոսքի գլխավոր հակասություններից մեկն էլ լեզվի կառուցվածքայնության (ծավալայնության) եւ խոսքի գծայնության մեջ է:

Լեզվի եւ խոսքի տարբերակման կապակցությամբ հարկավոր է նկատի առնել, որ տարածամանակայնությունը (դիախրոնիան) բացարձակ բնույթ ունի, համաժամա-

նակայնությունը (սինխրոնիան)՝ հարաբերական: Լեզվի գործադրման, այսինքն՝ խոսքի դեպքում տեղի է ունենում համաժամանակյա միավորների ներքաշում պրոցեսի մեջ, դրանց տարաժամանակացում. խոսքը որպես պրոցես ժամանակի որոշ հատվածում: Սակայն դինամիկը չպետք է նույնացնել պատմականի հետ: Եթե խոսքը դինամիկ երեւույթ է, ապա այն ինքնին առնված զուրկ է պատմությունից. բառիս բուն իմաստով այն անցողիկ երեւույթ է՝ ամրագրելի՝ համեմատելի այլ խոսքերի հետ այն չափով, որ չափով ամրագրվում է որպես լեզու: Իսկական պատմության կրողը լեզուն է, որի առանձին դրսևորումները կարող են համեմատվել ըստ հաջորդականության: Միաժամանակ՝ խոսքը անընդհատ բնույթ ունի (դադարները նույնպես իմաստի կրողներ են եւ մտնում են խոսքի մեջ որպես անհրաժեշտ տարր), լեզուն՝ ընդհատական (դիսկրետային):

Լեզվի եւ խոսքի տարբերակումը իր զուգահեռն ունի գիտակցության եւ մտածողության տարբերակման մեջ: Այսպիսով, ճիշտ կլինի խոսել ոչ թե լեզվի եւ մտածողության, այլ լեզվի եւ գիտակցության, համապատասխանաբար նաեւ խոսքի եւ մտածողության կապի մասին: Եվ իրոք: Մտածողությունը, ինչպես խոսքը, անմիջական եւ պրոցեսային բնույթ ունի, գիտակցությունը՝ ոչ. այն ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշ առկա վիճակ: Մտածողության յուրաքանչյուր ակտ հենվում է գիտակցության վրա եւ վերածվում գիտակցության փաստի: Սակայն պետք է նկատի ունենալ, որ լեզվի մեջ կարելորդեր են խաղում եւ ոչ գիտակցական երեւույթները (հմմտ. ձայնարկությունները):

## Լեզվի էվոլյուցիան

### Բարբառ եւ «Լեզվական օրգան»

Վերոբերյալ թե բովանդակության, եւ թե ներկայացման պլաններում փայլուն հատվածից հետո շատ դժվար է գրել այնպես, որ ստեղծված տպավորությունը չփչանա:

Ձերբազատվենք մեր գիտելիքներից ու նախապաշարումներից եւ ուղղակի դիտարկենք, հետեւենք մի որեւէ համայնքի խոսողներին: Ի՞նչ ենք նկատում՝

ա) մարդիկ շփվում են իրար հետ ոչ պատահական ձայնույթների շարաններով: Սա ոչ սպիտակ ազմուկ է, ոչ մի կամ մի քանի ձայնույթների պարբերաբար կրկնվող շարք, ոչ էլ մեղեդի է (որի սահմանումը ձեռքիս տակ չունեմ), չնայած որոշ տոնայնություն, տաղայնություն կա

բ) մարդիկ հաղորդակցվում են՝ ձայնային շարանը (հաղորդումը) ազդում է նրանց վարքի, գործողությունների վրա, տարբեր շարաններին նրանք տարբեր կերպ են արձագանքում, գործում, այսինքն՝ ընկալում, հասկանում են

գ) [մայրենի բարբառով] թե հաղորդման կառուցումը, եւ թե դրա ընկալումը հեշտությամբ է կատարվում, առանց մտածելու, առանց ջանք թափելու

դ) «Եթե լեզվի (ԱՀ. խոսելու ունակության) զարգացումը բաժանենք ինչ-որ չափով կամայական փուլերի, ինչպիսիք են վանկերով բլբլոց, հոդաբաշխ բլբլոց, միաբառ արտասանություններ, եւ երկբառ շարքեր, ապա հաջորդ փուլում բացվում են «Դժողբի դռները»: Երկու տարին բոլորելու մոտակայքից մինչև երկուսուկես տարեկան երեխաների լեզուն այնքան արագ է վերածվում սահուն քերականական խոսքի, որ այդ հեղե-

ղում հետազոտողները չեն հասցնում արձանագրել ենթափուլերի ճշգրիտ հաջորդակա-  
նությունը: Նախադասությունների երկարությունը անշեղորեն աճում է, եւ քանի որ քե-  
րականությունը դիսկրետ համակցական համակարգ է, շարահյուսական ձեւավորում-  
ների թիվը երկրաչափական աճ է ապրում, կրկնապատկվելով ամեն ամիս՝ հասնելով  
հազարների մինչև երրորդ տարեդարձը» [Pin1994::273] (գիտական քննարկումը տե՛ս՝  
[Len1967, Owe1988]): Այսինքն, համայնքի մանուկները արդեն երկու տարեկանից  
սկսում են խոսել եւ 4-5 տարեկանում ամեն բան, ինչ իրենց պետք է, կարող են մեծա-  
հասակներից խնդրել:

ե) որեւէ համայնքին 13-14 տարեկանից (early teens՝ [Len1967::158]) հետո միա-  
ցած ժողովուրդը դժվարություններ է հասկանում բարբառը (լեզուն), չի կարողանում ա-  
զատ, առանց մտածելու խոսել՝ օգտագործել համայնքի ձայնույթները, իմաստույթնե-  
րը, խոսքի կառուցվածքը (այսինքն՝ ոճը), նույնիսկ քերականությանը հմտորեն տիրա-  
պետելու դեպքում: Եւ ինչքան տարիքով ավելի մեծ է նորեկը, այնքան ավելի մեծ են  
մայրենի եւ ուսանված լեզուներով խոսքի տարբերությունները, ոչ մայրենի լեզվով խո-  
սելու դժվարությունները:

զ) կենսաբանները, բժիշկները, հոգեբանները, լեզվաբանները դիտարկելով հա-  
մայնքների եւ անհատների լեզվական վարքը հարցադրվեցին՝ «Ի՞նչն է բնածին լեզվա-  
կան վարքագծում»: Հիմնականում դասակարգման եղանակները, ինչպես քննարկվել  
են Յոթերորդ եւ Ութերորդ գլուխներում: Սա թաքնված կառուցվածքի կողմերից մեկն է:  
Բնածին է նաեւ ակտուալացման գործընթացի ընդհանուր եղանակը, բայց ոչ թե իրաց-  
ված կառուցվածքի մասնակի հատկանիշները: Այսպիսով, ոչ մի հատկանիշ, լինի դա  
շարահյուսական, կամ հնչյունաբանական, կամ էլ իմաստաբանական, որը բնորոշ է մի-  
այն որոշակի բնական լեզուների, մենք բնածին չենք համարում» [Len1967::394]:

Վերոբերյալ հատվածում հիշատակված թափնված կառուցվածքը ակտուալացման  
պրոցեսում դառնում է իրացված կառուցվածք՝ «լեզվական օրգան»:

Մայրենին միշտ կլինի բարբառ, իսկ պետականը՝ կանվանենք լեզու: Առաջինը  
չեն սովորում տիրապետում են, վերջինը՝ սովորում են, բայց հազվադեպ տիրապետում,  
հիմնականում՝ օգտագործում են:

Ստորեւ լեզու եւ բարբառ եզրույթները կօգտագործենք փոխարինաբար: Տարբե-  
րակման կարեվորության դեպքում այն բացահայտորեն կնշվի:

## Լեզվի եւ խոսքի ժամանակակից ըմբռնումը

1. Խոսելուց առաջ մարդը, այսինքն՝ «լեզվական օրգանը» (քանի որ մայրենի խոս-  
քի արտադրումը, հիմնականում գիտակցված չի), կառուցում է խոսքի (Ֆրազա-  
յի) քերականական ստրուկտուրան, որը ըստ Չոմսկու երկու հասկացություններ  
արտահայտող ֆրազաների վերկրկնվող մերձ[եց]ման ([merge](#)) հետեւանք է: Օրի-  
նակ՝ (երիտասարդը տեսավ) : ((աթլետիկ երիտասարդը) (տեսավ աղջկան)) : (((  
աթլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը) (տեսավ (գեղեցիկ աղջկան)))) : (((  
աթլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը) ((ամփիջապես տեսավ) ((աներեւակայելի  
գեղեցիկ) աղջկան)))) : (((  
աթլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը) ((ամփիջա-  
պես տեսավ) ((նայող (աներեւակայելի գեղեցիկ) աղջկան)))) : (((  
աթլետիկ (բո-

յով-բուսաթով երիտասարդը) ((անմիջապես տեսավ) (((պատուհանից նայող) (աներեւակայելի գեղեցիկ) աղջկան)))) : ((( արլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը) ((անմիջապես տեսավ) (((պատուհանից նայող) (աներեւակայելի գեղեցիկ) աղջկան)))) : ((((հեռադիտակով ( արլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը))) ((անմիջապես տեսավ) (((պատուհանից նայող) (աներեւակայելի գեղեցիկ) աղջկան))))). տարբերակ՝ ((( արլետիկ (բոյով-բուսաթով երիտասարդը) ((հեռադիտակով(անմիջապես տեսավ) (((պատուհանից նայող) (աներեւակայելի գեղեցիկ) աղջկան))))): խոսքային տարրական հատվածը՝ ֆրազան, երկատվող ֆրազաների ծառ է: Մանուկների լեզվի զարգացման փուլերից մեկում՝ տե՛ս դ) կետը նախորդ հատվածում, գործածում են պարզ երկբառ մերձումներ՝ ֆրազաներ (արտահայտություններ):

2. Համայնքը խոսում է բարբառով, որը մենք լեզու կանվանենք, երբ բարբառը պետական է կամ ավելի ճիշտ պետականացված է, քանի որ դա սովորաբար մի որեւէ բարբառի հիմքի վրա կառուցված (արհեստական) լեզու է: Ամերիկյան լեզվաբանական հայտնի մի կատակ կա՝ «լեզուն նավատորմ է բանակ ունեցող բարբառ է»: Քանի որ սա լուրջ, գիտական կայք է, ապա մենք կօգտվենք [Հայ2022::336]-ի գիտական սահմանումից:
3. Մարդու ուղեղում «լեզվի օրգան» կա, որը արագ (բնագղաբար) կատարում է բարդ լեզվական գործողություններ՝ խոսք է կազմում եւ ընկալում, բայց որի տեղն ու կառուցվածքը մենք չգիտենք: Սակայն «լեզվի օրգան»-ի ձեւավորման պրոցեսները հիմնականում պարզ են՝ [Len1967]:
4. Այդ օրգանում ի ծնե «գրանցված» է բոլոր բարբառների ընդհանրական «մետաքերականությունը», այսինքն՝ այն օրենքների ընդհանրական կաղապարները, որոնցով ցանկացած համայնքի անդամները ձայնույթների հասկանալի շարքեր են կազմում:
5. Ձայնույթների շարքերում նկատելի դադարները իրարից անջատված հաջորդականությունները կանվանենք բառ<sup>1</sup>, իսկ բառերի իմաստ ստացող հաջորդականությունները ֆրազա (բառակապակցություն): Առանձին բառը նույնպես ֆրազա է՝ մեկ բառից բաղկացած: Մնացած լեզվաբանական կառույցները հնարովի են (տե՛ս նախորդ էջատակր):
6. Մերձումով ֆրազաներ (syntactic structures) կառուցելու օրենքները նկարագրվում են BNF (նախկինում CNF) բանաձևերով (օրինակ [Հայ2022::146-149, 164-165, 336])՝

$\text{ԲՖ} ::= \text{Բ} + \text{ԳՖ}, \text{ԳՖ} ::= \text{Գ} + \text{ԳՖ}, \text{ԳՖ} ::= \text{ՈՖ} + \text{ԳՖ}, \text{ՈՖ} ::= \text{Ո} + \text{ՈՖ},$

եւ այսպես մինչեւ ձեւույթները՝

$\text{Ո} ::= \text{հԱ}, \text{Ո} ::= \text{Ո} + \text{աԱ}, \text{Ո} ::= \text{Գ} + \text{աԱ}, \text{ևն:}$

Այստեղ ԲՖ նշանակում է բալական ֆրազա, հԱ - ածական հիմք, աԱ - ածականակերտ ածանց: Ցանկացած հգորութչան ճշուղավորում կարելի է երկատմամբ (մերձեցմամբ) ներկայացնել: Բնութագիրը [Հայ2022::110-112, 164-165] մերձվող

<sup>1</sup> Սա ուսումնասիրության կարիք ունի. հակված եմ պնդելու որ «իրական» քերականական հասկացություններ են ձեւորվում եւ ֆրազան. ֆրազան կազմվում է մեկ կամ ավելի ձեւույթներից եւ բնորոշ է նրանով, որ ունի իմաստ եւ կարող է մի բան նշանակել:

ճյուղերի (ծառերի) ալյորնտրական նկարագրությունն է: Այն ենթադրում է, որ ձեռնարկները եւ ֆրագանները կարող են 0, 1, 2, եւ 3 (բալանկան ֆրագանները) արժույթ ունենալ: 3-րդ եւ ավելի մեծ արժույթները թույլատրող [Հայ2022::37-38] են, մինչդեռ ավելի փոքրերը կարող են ե՛լ թույլատրող, ե՛լ պարտադրող լինել<sup>2</sup>:

Երբ մարդն արդեն վարժ խոսում է, նրա ուղեղում, թաքնված կառույցի ակտուալիզացիայի հետեւանքով, արդեն գրանցված են համայնքի ա) արտասանելի եւ հասկանալի բառերի բազմությունները եւ բ) այդ բառերը համակցելու (մերձելու) օրենքները:

Այդ երկու բազմությունները միասին անվանենք խոսագեների բազմություն (ԽԳԲ), որը կենսաբանական ԴՆԹ-ի լեզվական նմանակն է: Եթե մարդու ԴՆԹ-ն պարունակում է գեներ, «ծրագրեր», որոնցով ուղղվում է սպիտակուցների սինթեզը, ապա ԽԳԲ-ի «ծրագրերով» սինթեզվում է խոսքը: Օրինակ՝ գեներով սինթեզվում է ինսուլինը, իսկ ԽԳԲ-ով՝ «Դե լավ, տղեք, ... հելա տուն» ֆրագան<sup>3</sup>:

Պետք չէ լեզվաբան լինել, որպեսզի նկատել, որ համայնքի ամեն մի անդամ վերոնշյալ ա) եւ բ) բազմություններից յուրովին է օգտվում՝ տարբեր մարդիկ այս կամ այն բառը, այս կամ այլ համակցման օրենքը տարբեր հաճախականությամբ են գործածում: Ամեն մարդ ունի իրեն հատուկ խոսվածքը, ոճը:

ժամանակի ընթացքում ԽԳԲ-ի կազմը, հաճախականությունները փոփոխվում են, բայց ամեն ակնթարթ ամեն մեկի ուղեղում գրված են «ռեալ», «ֆիզիկական» սուլ-նություններ:

Այսպիսով խոսվածքի ԽԳԲ-ն (նաեւ անհատի ԴՆԹ-ն) սուլնություն է, որը ինչ-որ տեսքով ֆիզիկապես գոյություն ունի մարդկային ուղեղում (բայց մենք չգիտենք, թե ի՞նչ ձևով) : Ինչպես կենդանական աշխարհում, ամեն մի անհատ գալլ ունի հատուկ, ֆիզիկական ԴՆԹ, բայց Հայաստանի գալլերի ԴՆԹ գոյություն չունի: Հայաստանի գալլերի բնակչության գենոմը՝ որը վերացական, վիճակագրական հասկացություն է, կարելի է հաշվարկել [պոպուլյացիոն գենետիկայի](#) մեթոդներով:

Բարբառը, գալլի (տեսակի) նման, հասկացություն է, այլ ոչ թե սուլնություն: Բարբառը, խոսագենոմը կարելի է ասել ԽԳԲ-ների բնակչության (XSG population) միջայնացված (average) ԽԳԲ-ն է: Մի այլ տեսակետից՝ ոչ թե միջայնացված (ընդհանրական), այլ հավաքական (տե՛ս բացատրությունը [Հայ2022::207])

Կենսաբանական տեսակների նման, մշակութային բարբառ-տեսակները չեն խաչասերվում, «խառնվում»: Եթե ընդունում ենք այս տեսակետը [Հայ2022::336], ապա լեզուն բարբառ-տեսակի մշակութային ցեղն է:

Հաջորդող հատվածներում կուրվագծենք, կուսումնասիրենք բարբառների խոսագենոմի հաշվարկման հնարավոր մոտեցումները:

<sup>2</sup> Այս լեզվաբանական «քիմիայի» ձեւավորումը մտավոր որոշակի ռեսուրսներ է պահանջում իրական տեսություն դառնալու համար:

<sup>3</sup> Իհարկե, կարելի է այլ գուգահեռներ՝ ԽՄԳ/ԴՆԹ, ֆրագա/հոմոն (հաղորդման Ռիբոսոմկլեամթու), «լեզվական օրգան»/ռիբոսոմ, պրոտեին/հասկացություն, մտաշար (մտքերի պատկերաշար)/սպիտակուց, ևն, բայց դա այս համատեքստում էական չէ:

Կարճ ամփոփում՝

1. ԽԳԲ-ն «ուեալ» ծրագիր է, որը կոմպյուտերային ծրագրի նման բեռնավորվում է ուղեղում գտնվող «լեզվի օրգանի» մեջ հիմնականում մանկան կյանքի 2-5 տարեկան հատվածում: Այսպիսով, ի տարբերություն կոմպյուտերային Օպերացիոն համակարգի (ՕՀ), որը սովորաբար միանվագ, մի քանի րոպեում է բեռնավորվում հաշվողական սարքի մեջ, խոսք արտադրող ՕՀ-ն բեռնվում է «լեզվական օրգան» մի քանի տարվա ընթացքում, մաս-մաս: Մյուս կարեվոր տարբերությունը կոմպյուտերային ՕՀ-ի արհեստական, մտավոր գործունեության ստեղծած է, իսկ «լեզվի օրգանի» ՕՀ-ն պատահական, անգիտակից, ինքնաբեր գործընթացի հետեւանք է:
2. ԽԳԲ-ն այն ծրագիրն է, որի օգնությամբ կազմվում են ֆրազաներ, որոնք մարդը արտասանում է, կամ ձայնով, կամ գրապատկերով, կամ ժեստերով: ԽԳԲ-ն արտադրում է խոսք:
3. Բարբառը վերացական, միջայնացված ԽԳԲ է՝ խոսագենոմ: Անհատը, ավելի ճիշտ անհատի «լեզվական օրգանը» խոսք է արտադրում ԽԳԲ-ն որպես ծրագիր օգտագործելով: Այսինքն, կարող ենք ասել, որ բարբառը, որը ԽԳԲ-ների գերբազմություն է, արտադրում է համայնքի խոսքը:

Ինչպես որ բարբառը անհատների ԽԳԲ-ների՝ խոսվածքի, բազմություն է, որոնք «գոյություն» չունեն, այնպես էլ լեզուն բարբառների բազմություն է, որը «գոյություն» չունի. այն սուլնություն չէ: Գայլ «գոյություն» չունի, անհատ-գայլն է գոյ եւ «ունի» գոյություն: Օրինակ՝ հայերենը Երեւանի, Տավուշի, Թիֆլիսի, Պոլիսի, Վանի բարբառների վերաբերյալ նույն վերացարկումն է, ինչպիսին այդ բարբառներից յուրաքանչյուրը ամեն մի անձի գլխում գրված խոսվածքի՝ խոսագենների համար բարբառն է: Ոչ գիտական գրականության (ցավոք նաեւ գիտական), առօրյա խոսքում, մենք լեզու ասելով հասկանում ենք, եւ պետական լեզուն, եւ բարբառը, եւ խոսքը, եւ բարբառն ու խոսքը միասին (Չոմսկին եւ տիեզերքի ողջ անգլեախոս բնակչությունը), եւ քերականական կանոնների եւ բառամթերքի բազմությունները, եւ միզուցե էլի մի քանի բան:

Լեզու/բարբառ, լեզու/խոսք նույնացումը այնքան տարածված է բոլոր մշակույթներում, որ անհնարին (եւ անհիմաստ ու ոչ նպատակահարմար) է փոխել: Սրանից հետո, որպեսզի ոչ ես տանջվեմ, ոչ էլ ընթերցողը, մեր սովորական խոսքին հատուկ, լեզուն բարբառի փոխարեն կգործածենք: Նրանք, ում որ «նավատորմով ու բանակով» որոշվող լեզուն չի բավարարում, կարող են գիտարկել [Հայ2022:336]-ի բարբառի եւ լեզվի հարաբերության բացատրությունը/սահմանումը, որը կարեվոր է նաեւ լեզվական էվոլյուցիայի պարզաբանման համատեքստում:

Այս գրության սահմաններում հետեւյալ նշանակություններ են գործածվում՝

1. Լեզուն (բարբառ) խոսք արտադրող է (տե՛ս մանրամասները [Hay2023]: Լեզուն Սոսյուրի langue-ն է, Չոմսկու՝ ունակությունը (իրագեկությունը, տիրապետումը), Լեննբերգի ակտուալացված իրական կառույցն է: Սակայն սրանք ոչ թե լեզվի էությունն են արտահայտում, այլ հատկանիշներից մեկը: Լեզուն սուլնացվում (ակտուալացվում, իրացվում, առկալացվում) է անհատի «լեզվի օրգանում» եւ խոսելու պրոցեսում խոսք արտադրում՝ ա). speech-act-ում. Շուլանին պատուհանից կանչելիս. բ) write-act-ում. բուրֆիայի սուլթանին

նամակ գրելիս, գ) gest-act-ում. խոսկամբերի համար նորությունները ձեռքի եւ երեսի մկանների շարժումներով մեկնաբանելիս.

2. Խոսքը լեզվի արտադրանքն է եւ տարբերվում է նրանից, ինչպես շամպայնը Քանաքեռի շամպայնի գործարանից, Ժիգուլի ավտոմեքենան Տոլյատիի գործարանից, Python լեզվով գրված ծրագիրը Python լեզվից: Խոսքը սինթրոն է (Սոսյուր), կատարման (Չոմսկի) հետեւանք է:
3. Լեզուն (բարբառը) համայնքի կողմից գործածվող խոսազենոմն է:
4. Համայնքի ամեն մի անդամի խոսքը ունիկալ է, ուրույն բարբառ է (մատնահետքերի, Գնթ-ի նման): Նմանապես, ընտանիքը, կամ ավելի մեծ համայնքային խմբեր ունեն իրենց ուրույն լեզուները (բարբառները, խոսվածքները): Սրանք լեզվի ենթաբազմություններ են, որոնք բնորոշում են անհատի կամ խմբի ոճը: Անհատի ոճը պայմանավորված է ձեւույթների եւ քերականական օրենքների գործածաման հավանականություններով: Լեզվի նույն երկու (ավելի ճիշտ 3՝ ձեւույթ, արտասանություն, գործածում) կազմիչների հաճախակա-նությունները բնորոշում են խոսվածքները եւ բարբառները: Այսպիսով, պրագմատիկ օրենքները ոչ թե առանձին օրենքներ են, այլ լեզվի տարբեր ենթաբազմություններ՝ խոսքազենոմներ: Եւ կրկին, եթե անհատի ոճը ֆիզիկապես գրված է որպես ԽԳԲ, ընտանիքի կամ այլ խմբի ոճը լեզվի (բարբառի) նման վերացականություն է՝ այն ֆիզիկական գոյ, ֆիզիկական գրառում չի:

## Ինքնապատճենում

Կենսաբանական հիմնական գործընթացներից է ինքնապատճենումը (ԻՊ)<sup>4</sup>:

Կենսաբանական ամենամեծ, ինքնուրույն ԻՊ միավորը բջիջն է: Բնության մեջ մինչեւ Daw2005 առաջին հրատարակությունը 1976 թ. մի տեսակի ԻՊ էին դիտարկում՝ գենը, որը երբեմն կոչում են հին պատճենվող, քանի որ առաջարկվեց նորը՝ մշակութային էվոլյուցիայի մեմն է. տե՛ս *The Language evolution* հատվածը [Hay2023]: Այդտեղ թուղիկ նկարագրվում է այն ամենը, ինչի մանրամասները կճշտվեն այստեղ: Այնտեղ նաեւ թվարկվել են պատճենվողներն (հին թե նոր) երեք հիմնական հատկություններ ունեն՝ ա) պատճենման բարձր ճշտություն, բ) բարձր պտղաբերություն (պտղատվու-թյուն, բեղմնավորություն), եւ գ) երկարակեցություն [Daw2005::16-18, 194]:

Սակայն, մեմը սոսկ գաղափար է (նկատենք, որ այս մեմը ոչ մի առնչություն չունի այսպես կոչված ինտերնետ մեմերի հետ, որոնք, հիմնականում, արագ տարածվող տեսանյութ են նշանակում):

Այստեղ կփորձենք հիմնավորել լեզվի մեմերը առկայացնելը որպես ԽԳԲ:

<sup>4</sup> Առօրյա խոսքում մենք անտեսում ենք այն փաստը, որ մարդկանց կամ որեւէ այլ կենդանու բազմանալու պրոցեսը ԻՊ կամ, առհասարակ՝ պատճենում, չի (չնայած թվում է, թե քանի որ մենք մեր մամա/պապային ենք նման, ուրեմն իրենք պատճենվել են)

# Բնալեզվական պրոցեսները

## Տեսություն

Ապրող լեզվի միջավայրում մի քանի բնական, կենսաբանական պրոցեսներ են ընթանում, որոնցով պայմանավորվում է լեզվական էվոլյուցիան՝

Լեզվի ձևերը բերում՝ սա ԽԳԲ-ի ինֆնապատենման շնորհիվ կամ հետեւանքով է տեղի ունենում (քողարկված կառուցի վերածումը իրացվածի [Len1967])

1. Խոսքի արտադրում (սերում, սինթեզում)
2. Խոսքի սպառում (ընկալում, վերլուծում)
3. Այս գործընթացների առկայությունն է լեզուն ապրող, կենաց դարձնում:

Լեզվական մյուս պրոցեսները՝ գրելը, կարդալը, ոչ մայրենի կամ գրավոր լեզու սովորելն ու գործածումը, բնական (կենսաբանական) չեն եւ լեզվական էվոլյուցիայի հետ առանձնապես չեն (?) առնչվում:

## Լեզվի ձևերը բերում

Բնական լեզվին տիրապետելու պրոցեսը ամենայն հավանականությամբ սկսվում է դեռ արգանդում (?), հենց որ պտուղը լսելու հնարավորություն է ստանում (սա կարող ծնունդից հետո լինել (?)): Ամեն դեպքում լսելու եւ խոսելու («լեզվի օրգան») գործիքակազմի ձեւավորումից հետո, մանուկն ամենայն հավանականությամբ սկսում է «Ֆիլտրել» ոչ խոսքային աղմուկը եւ «լեզվի օրգան»-ում «գրանցել» որոշ հոդաբաշխ տեղեկույթ, օրինակ՝ ձայնույթներ, վանկեր: Սրա ապացույց կարելի է համարել մանկան փորձերը վանկեր արտասանել ամենավաղ հասակից<sup>5</sup>:

## Խոսքի սերում եւ ընկալում

Եթե ընդունենք «լեզվի օրգանի» գոյությունը, նրա ՕՀ-ով բեռնավորման փոխաբերությունը, ապա կասենք, որ մանկական հասակում մայրենի լեզուն վերբեռնվում է համայնքի մյուս ուղեղներից «լեզվի օրգանի» մեջ եւ դառնում այն «ծրագրավորման» միջավայրը, որում սերվում եւ ընկալվում է խոսքը:

Խոսքի սերման ընթացքում ԽԳԲ (հմմտ. ԴՆԹ) օգնությամբ կառուցվում են ֆրագաներ (հմմտ. պրոտեին, սպիտակուց - նախադասություն), որոնք ձեռքերի, կոկորդի եւ բերանի խոռոչի մկանների շարժումներով արտահայտվում, արտասանվում, արտահանվում են ուղեղից: Մտքի (բանականության) ներգրավածությունը այս ամենում կայանում է «լեզվի օրգանին» հրահանգ տալում: Միտքն «ասում» է «լեզվի օրգանին».

<sup>5</sup> Այստեղ մի շատ հետաքրքիր, գիտափիլիսոփայական, գիտակցության «բարդ» խնդիրների դասին պատկանող առեղծվածային բան է կատարվում: Երեխային ոչ ոք չի սովորեցնում թե լեզուն ուր տանի, ուր դնի այս կամ այն ձայնը արտադրելու համար (ինչպես անում են մեծահասակներին երկրորդ լեզուն սովորեցնելիս): Ինչպե՞ս է մանուկը «հասկանում», թե ի՞նչ է պետք անել ձայնույթները արտասանելու համար: Նրան ոչ մի տեղեկություն չեն տալիս: Ձայնային պատկերը, որն ականջի միջոցով ուղեղ է հասնում չունի ոչ մի նմանություն կոկորդի եւ բերանի խոռոչի մկանների շարժման պատկերի հետ (բացառություն են կազմում միգուցե ձայնավորները, որոնց արտասանության շարժումները երեւում են եւ մանուկը կարող է կապել ձայնային պատկերը շուրթերի շարժապատկերի հետ): Սա \$64000-անոց է, որի լուծման համար պետք է ֆիզիոլոգիայի նոբելյան մրցանակ տալ

«Գլխումս (մտքումս) տեսային, ձայնային, համային, հոտային, շփական պատկերներից կառուցված «վիդեո» (պատկերաշար) ունեմ, մի տե՛ս՝ ի՞նչ էս անում էդ ամենը քերականական (ավարտուն, հասկանալի) խոսքով արտահայտելու համար: «Լեզվական օրգանը» մտքում կառուցված «վիդեոն» կողավորում է իմաստալից, ձևույթների ծառատիպ համակցությունով, որի իմաստը նշանակում է այդ «վիդեոն» է, եւ այն գծայնացնելուց հետո արտահանում է<sup>6</sup>:

Ընկալումը, որը խոսքի վերլուծումն է (parsing), կարելի է դիտարկել որպես սերման հակառակ պրոցես: «Լեզվի օրգանը» մտքին «ասում» է. դրսից մի գծայնացված կողով հաղորդում եկավ, որը ես, օգտվելով *ԽԳԲ-ից*, էս տեսակ ծառի եմ վերածել: Տե՛ս մտքումդ ինչ «վիդեոյի» է այն համապատասխանում:»

Այս գործընթացի ժամանակ նշանակությունը, այսինքն իմաստին գոյ, իր, երեւույթ, են համապատասխանեցնելը կատարվում է կոնտեքստից՝ լայն առումով [Հայ2022:199-202], կախված:

Ընկալման ժամանակ կարող են փոխվել, նորացվել ինչպես ընկալողի մտքում առկա պատկերները, «վիդեոները», այդպես էլ *ԽԳԲ-ն*՝ ձևույթների կազմը եւ արտասանությունը, օրենքների կազմը եւ մանրամասները: Վերջինը *ԽԳԲ-ի* մուտացիան է: Այսպիսով, խոսքը ոչ միայն իմացական ինֆորմացիա՝ նորություններ, գիտելիքներ, է հաղորդում, այլ նաեւ խոսազենետիկ:

[Կենսաբանական էությունների նմանակումը թողնում եմ ընթերցողին (եթե դիմացել են ու այստեղ հասել), որպես վարժություն: Քննության ժամանակ հարցնելու եմ:]

## Մայրենի բարբառի էվոլյուցիան

Ինչպես եւ գենետիկ էվոլյուցիայի դեպքում, մուտացիան տեղի է ունենում *ԽԳԲ-ում* եւ տարածվում է ինքնապատճենման միջոցով: Ինչպես եւ կենսաբանական «[դոզմալ](#)» (եւս մի անհաջող, «սխալ» եզրույթ, որը կրիկն է հնարել) դեպքում, ինֆորմացիան շարժվում է *ԽԳԲ-ից* դեպի խոսք, ինչպես *ԴՆԹ-ից* դեպի սպիտակուց: Ճիշտ է, *ԽԳԲ-ի* դեպքում կարող է թվալ, թե ընկալված խոսքը փոխում է լսողի *ԽԳԲ-ն*, բայց սա իրականում խոսազենետի *ԻՊ* է՝ խոսողից լսողին: Այստեղ խոսքը խոսազենի տարածման միջոցն է (medium):

Մուտացիաների պատճառները, երեւի թե կենսաբանականի նման, բազմազան են<sup>7</sup>:

*ԽԳԲ* կառուցվածքը կարելի է հետեւյալ կերպ պատկերել՝

<-ձևույթ<ձայնույթներ><պիտակ...>...-><-հնչունափոխություն-><-BNF...-> [1]

Աստեղ գրանցվում են ամեն մի ձևույթի նկարագրությունը՝ ա) <ձևույթ> մեսրոպատառ ուղղագրությամբ, բ) <ձայնույթներ> IPA ուղղարտասանությամբ, գ) <տեսակ> [ընդլայնված] [UD](#) պիտակներով, այսինքն ձևույթի տարբեր դերերով BNF-ե-

<sup>6</sup> Այստեղ կրկին հանդիպում ենք [գիտակցության բարդ խնդրին](#)՝ [քալիքա](#)-սուլնություն (իր, երեւույթ) «թարգմանությունը», որը գիտնականները դեռ չեն լուծել

<sup>7</sup> Սա մանրամասն ուսումնասիրություն է պահանջում, որի ժամանակը (եւ փողը, որ նույն է) ես չունեմ

րում: Ձեռնարկների [համա, հարա]-դրման հետ կապված <-հնչյունափոխություն...> հնչյունափոխական եւ քերականական BNF-երում օրենքներով:

Ընդհանուր նկարը հետեւյալն է:

Համայնքի անդամների ուղեղում (մտքում) գրված *ԽԳԲ*-ի միջոցով արտահայտված խոսքը, որը ապահովում է խոսազենների պատճենավորումը: Ամեն մի ակնթարթում հաշվարկված համայնքի *ԽԳԲ*-ների միջայնացված *ԽԳԲ*-ն՝ խոսազենումը, բարբառի ներկա էվոլյուցիոն վիճակն է արտահայտում: Բարբառի էվոլյուցիան հետեւելու համար պետք է բարբառի խոսազենումը, օրինակ՝ ամեն 250-ն տարին մեկ, չխկացնել (take a snapshot):

## Կորպուսի լեզվաբանական կարեվորությունը

Այստեղ կքննարկենք կորպուսի, հատկապես, լեզվաբանական (գիտական) կարեվորությունը. կան, իհարկե, այլ կարեվորություններ՝ կոթողային (մշակութային), ուսումնական, բանասիրական, ևն:

Կորպուսները բավարար լրացնելուց հետո, կարելի է ամեն աղբյուրին (անհատին) հատուկ *ԽԳԲ*-ն (տե՛ս [1] բանաձևեր) գրառում (record) հատկացնել եւ դրանց հիման վրա հաշվարկել բարբառի խոսազենումը:

Այդ խոսազենումը ինքնաշխատ (ավտոմատ) կերպով կտա բարբառի բառարանը արտասանություններով եւ քերականական օրենքները (եւ կարգերը): Այսպիսով, բառակազմի, արտասանության, հոլովների, խոնարհումների, եւ ոճերի հետ կապված խնդիրները կլուծվեն ոչ թե այս կամ այլ [մեծ] գիտնականին հարցնելով կամ հղելով, այլ կորպուսում նայելով:

Տվյալ բարբառի բառարանները եւ քերականության դասագրքերը կամ կկազմվեն կորպուսի տեղեկույթի ինքնաշխատ ձեւափոխումով եւ տպագրումով, կամ ուղղակի առցանց մատչելի դարձնելով: Այս սցենարը շատ-շատ վաղուց է կանխագուշակվել [Հայ2022:223], տեղական Նոստրադամուսի կողմից:

## Բարբառի եւ ստանդարդ լեզվի հարաբերությունը<sup>8</sup>

Նախ ճշտենք եզրաբանությունը՝ ստանդարդ կամ պետական լեզու ասելով հասկանում ենք գրական լեզուն եւ դրա բանավոր գործածումը վարչական եւ լրատվական բնագավառներում: Պետական դպրոցներում սովորեցնում (սովորո՞ւմ) են պետական խոսվածքը: Պետական կամ ստանդարդ ենք ասում որպեսզի խուսափենք «գրական լեզվով ա խոսում» օքսիմորոնից: Բացի այդ, անցյալում [Մ.Մաշտոցի օրոք] ստանդարդը միայն գրական էր. ոչ պետություն կար, ոչ էլ միկրոֆոն:

<sup>8</sup> Խնդրին հեղինակը շատ ուշադրություն չի դարձրել, խորը չի ուսումնասիրել: Այս հատվածը ավելի շուտ «բարձրաձայն խորհմունքներ» են

Պետք է անմիջապես արձանագրել [Փաշինյան, հրապարակախոսություններ, ելույթներ], որ գրական լեզուն, լինի ստանդարդ կամ ոչ, բնական չէ: Այն տեխնոլոգիա, գյուտ է<sup>9</sup>:

Պարզ պատճառներով լեզվաբանությունը ավելի խորը եւ հանգամանալից ուսումնասիրել է գրական լեզուն (մոտ 150 տարի է ձայնագրելու հնարավորություն ունենք, այն էլ լավ չենք օգտագործում՝ մինչեւ հիմա բարբառների ձայնային կորպուս չունենք):

Հետաքրքիր է հասկանալ գրական լեզու - բարբառներ սինքրոն եւ դիաքրոն փոխհարաբերությունները: Ինչպե՞ս են մեկը մյուսի վրա ազդում, ինչպես են դրանք զարգանում: Ակնհայտ է, որ բարբառը փոփոխվում է, հիմանականում, էվոլյուցիոն, բնական գործընթացներով, մինչդեռ գրական լեզվի փոփոխությունները բնույթով դեկրետային են եւ արհեստական:

Ե՞րբ եւ ինչպե՞ս են տեղի ունենում բարբառների այնպիսի հեռացումը գրական լեզվից, որ «աղետաբեր», «կատակլիզմիկ» երեւույթներ են առաջանում, ինչպիսիք էին օրինակ՝ գրաբար - միջին հայերեն - աշխարհաբար հատվածումը: Ժամանակն է արդյոք նոր «անկախաբար» տարբերակի ստանդարդացումը եւ դրանց պոչին ավելացումը:

Ըստ [Հար2023] ժամանակակից Երեւանցին գրական խոսքը չի ընդունում, չի հասկանում: Այդ պնդումը կարելի է ստուգել փորձով՝ թող տան տղամարդը գնա «SAS» եւ կես կիտ սպիտակաձավար կամ մանրաձավար խնդրի վաճառողից, իսկ տան տիկինը՝ «Home depot», եւ 3 պտուտա[կա]մեր եւ 2 գնդերիթ գնի: Հնարավո՞ր է որպես ստանդարդ, գրական լեզու ընտրել բնական լեզուն, օրինակ՝ Երեւանի բարբառը [Հար2023:39]:

## Անփոփում

Պատասխանելով էջի սկզբում դրված հարցերին ասենք, որ լեզվական էվոլյուցիայի ենթական խոսադեհն է: Լինելով ԻՊ եւ պատահական փոփոխությունների ենթարկվող սուչնություն, այն կրում եւ սփռում է մուտացիաները համայնքի ԽԳԲ-ներով: Խոսագեների, ինչպես եւ ցանկացած մշակութային գեների, գործունեության միջավայրը, էկոհամակարգը մարդկանց միտքն է՝ նոոսֆերան ([noosphere](#)): Մշակութային էվոլյուցիայի տեսանկյունից տիեզերքը, գեոսֆերան (երկրորդը), եւ բիոսֆերան (կենսոլորտը) անփոփոխ են:

Այս պատկերը, թվում է թե, ավելի պարզ է դարձնում լեզվի եւ խոսքի հարաբերությունը եւ տարբերությունը, մատնանշում տեղի ունեցող պրոցեսները, քանի որ նույնիսկ ամենազուլալ բացատրության մեջ էլ որոշ շփոթություն կա՝ «Ո՞րն է լեզվի եւ

<sup>9</sup> Այդ առումով նրա ուսումնասիրությունները պետք է զբաղվի լեզվաբանական ճարտարագիտությունը, որը կլուսաբանի այբուբենի կառուցվածքն ու բավարարությունը (կամ անբավարարությունը, օրինակ՝ անգլերենի), ուղղագրությունը, ևն: Կպարզի, որ օրինակ հայկական փոքրատառերը ահավոր են մեծատառերի համեմատ, թե էստետիկ, եւ թե ընթերցելիության տեսանկյունից: Ծարտարագիտության մյուս օբյեկտներ են արհեստական՝ եսպերանտո, իտերլինգուա, ևն, եւ, միգուցե, ձեւական լեզուները

խոսքի գլխավոր տարբերությունը: Անկասկած այն, որ խոսքը որոշ պրոցես է, լեզուն՝ այդ պրոցեսի նախադրյալն ու արդյունքը»:

Ստացվում է, որ խոսքը ինչ-որ գործող շարժիչ է, օրինակ՝ միացրած, աշխատող հաշվիչ, համակարգիչ, որ վերցնում է լեզուն որպես մուտք, միզուցե, ձեւափոխում այն եւ դուրս թքում:

Մեր մտեցումը, կարելի ասել, ինչ-որ չափով հակառակն է: Շարժիչը «լեզվի օրգանն» է, որում լեզուն ծրագրի դեր է կատարում: Այդ ծրագրի կարող ընդունել խոսքը եւ ծառատիպ կող սարքել, որին միտքը (ուղեղը) պատկեր կամ երեւոյթ է նշանակում: Այստեղ ծառատիպ կողը Ֆրեգեի իմաստն է, իսկ պատկերն ու երեւոյթը՝ նշանակութունը [Hay2023::Sense and Reference]:

Եւ հակառակը, «լեզվի օրգանը» կառուցում է մտավոր պատկերին կամ երեւոյթին համապատասխանող ծառատիպ կող եւ արտահանում այն ձայնային, գրային, կամ շարժային նշաններով [Hay2023::Analysis]:

Չոմսկին եւ Սոսյուրը լեզվի եւ խոսքի մասին խոսելիս չեն տալիս սահմանումներ, չեն բացահայտում այդ զույգի էությունը: Առաջինը տարբերում է դրանք մատնանշելով մարդու վարքի տարբեր կողմեր, իսկ մյուսը՝ համայնքի վրա ազդեցությունը եւ հատկությունները՝ սինքրոն, դիաքրոն:

Պրոցես/գույ (վիճակ) երկակիությունը յուծվում եւ անհետանում է, երբ լեզուն դիտարկում ենք որպես խոսք արտադրող, իսկ խոսքային պրոցեսը՝ խոսքի (գույերի) փոխանցում: Լեզուն ապահովում է խոսքի արտադրումն ու սպառումը:

Լեզվաբանությունը լինելով լեզուն եւ խոսքը նկարագրող/ուսումնասիրող գիտություն հիմնականում (մանավանդ անցյալում) ուսումնասիրել է գրավոր խոսքը: Այն ավելի կանոնավոր է եւ հեշտ է նկարագրվում: Սակայն բնական լեզվի, բարբառների ուսումնասիրությունը նույնպես, եթե ոչ ավելի, կարեւոր է: Կարեւոր է նաեւ գրական-բնական լեզու փոխհարաբերության ուսումնասիրությունը (որոշ ուղեցույցներ կան՝ [Ջահ1969::16-22, 28-31]):

Լեզվի ձեւավորումն ու զարգացումը երկու հակասական «նպատակներ» հետապնդողների փոխազդեցությամբ է պայմանավորվում՝ ա) մանուկների, որոնց համար ձայնույթները, իմաստույթները, կանոնները պետք է պարզ, դյուրին լինեն, եւ բ) մեծահասակների, որ այդ ամենը բարդ մտքերի կարճ արտահայտելու հնարավորություն ընձեռնի: Այս միտումների ուսումնասիրությունը կարող է լուսաբանել, թե ինչո՞ւ նվազագույն ճիգը երբեմն չի գործում կամ նրա արդյունքները ակներեւ չեն: Մանուկների նվազագույն ճիգը լեզվին տիրապետելու ոլորտում է գործում, իսկ մեծահասակներինը՝ գործածման: ԽԳԲ-ն ձեւավորվում է այս երկու միջավայրերում գործող ճնշումների ներքո:

Խաղերի տեսությունը ուսումնասիրության հնարավոր գործիքակազմ կարող է հանդիսանալ: Այն կիրառելի ոչ միայն ռացիոնալ գործողներին՝ այլ նաեւ «ընկալվող» նպատակամղվածություն ցուցաբերող խմբերին՝ խոսող մանուկների եւ մեծահասակների խմբերին:

Պրագմատիկ օրենքները խոսքագեների գործածման հաճախականություններն են:

Հումանիտար տեխնոլոգիաների զարգացման ալս հատվածում հնարավորութիւն կա մեծաւայ [կորպուսներ](#) միջոցով ուսումնասիրել բարբառները եւ, ֆիզիկոսների նման, ավելի շատ ապավինել գործիքներով ստացված փորձնական տվյալներին, քան անհատական կարծիքներին:

## Եզրույթներ

Այստեղ եւ վերելում [Հայ2022]-ի էջերը Հայաստանյան տպագրութեանն են. ինտերնետայինի հաշվարկման (համապատասխանեցման) բանաձեւը տես [Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին](#) էջում:

Բարբառ - տե՛ս [Հայ2022::336]

Բնալեզվական պրոցեսներ – լեզվի գոյութիւնը երեք պրոցեսով է պայմանավորվում՝ ա) ձեռք բերում, բ) խոսքի արտադրում, եւ գ) խոսքի ընկալում

Լեզու - տե՛ս [Հայ2022::343], [Հայ2023] , Լեզու եւ խոսք հատվածը

ԽԳԲ - խոսազենների բազմութիւն: Մարդու մայրենի լեզվի ձեւութների եւ այդ ձեւութներից խոսք սերող կանոնների բազմութիւնները, որոնք մեզ [ղեռ] անհայտ ձեւով գրանցված են ուղեղում: Այս բազմութիւնների ամեն մի անդամ խոսազեն է: Ինչպէս կենսաբանական գենետիկայում, այդպէս էլ լեզվաբանականում երկու տեսակի գեներ կան՝ ա) [սպիտակուց] կողավորող եւ բ) [սպիտակուցի արտադրանքը] կառավարող

Խոսազենում - լեզու (բարբառ) կրողների ԽԳԲ-ների միջայնացված ԽԳԲ: Ամեն գենին վերագրվում է հաճախականութիւն, որը համայնքի ԽԳԲ-ների քաղվածքից ստացված միջին արժեքն է:

Խոսվածք ([vernacular](#)) – Ժողովրդական լեզուն. լեզվի սովորական, ոչ ձեւական, խոսակցական ձեւը, հատկապէս, երբ ընկալվում է որպէս ավելի ցածր սոցիալական կարգավիճակ կամ ավելի քիչ հեղինակութիւն, քան ստանդարտ լեզուն, որն ավելի կանոնավորված է, պետական ինստիտուտներով առաջ մղվող, գրական կամ ֆորմալ:

Խոսք - տե՛ս [Հայ2022::344], [Հայ2023], Լեզու եւ խոսք հատվածը, [Hay2025].

Վերկրկնութիւն - տե՛ս [Հայ2022::359-360]

Սպիտակ աղմուկ - ազդանշան, որը պարունակում է նույն հզորութեան տարբեր հաճախականութիւններ: Պատահականութեան հավասար բաշխման նկարագրութիւն է: Սպիտակ աղմուկը վերաբերում է ազդանշանների և ազդանշանների աղբյուրների վիճակագրական մոդելին, այլ ոչ թե որեւէ կոնկրետ ազդանշանի: Սպիտակ աղմուկն իր անվանումը ստացել է սպիտակ լուսից, չնայած սպիտակ թվացող լուսը տեսանելի տիրութիւն, որպէս կանոն, չունի հարթ հզորութեան սպեկտրի խտութիւն :

Սուլնութիւն - տե՛ս [Հայ2022::358]

Տրագա – բառակապակցութիւն

# Գրականություն

[Daw2005] R. Dawkins. The Selfish Gene (30th anniversary ed.). Oxford University Press. 2005. Տե՛ս նաեւ [Վերիպեզիա](#):

[Hau2002] M.D. Hauser, N. Chomsky, W.T. Fitch. The faculty of language: what is it, who has it, and how did it evolve?. Science. 298 (5598): 1569–79. 2002

[Hay2023] A. Hayrapetyan. [What is language?](#). *ՀԹՏ*, 2023

[Hay2025] A. Hayrapetyan. [Conjunctions in Eastern Armenian](#)

[Len1967] E. H. Lenneberg. Biological foundations of language. Wiley, NY, 1967. Chapter 9՝ [Դեպի լեզվի զարգացման կենսաբանական տեսություն](#)

[Owe1988] R.E. Owens, Jr. Language Development. An introduction. 2-nd ed. Merrill Publishing, 1988

[Pin1994] S. Pinker. The Language Instinct. William Morrow & Co (HarperCollins Publishing) London, 1994.

[Հալ2022] Ա. Հալրապետյան, [Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին](#). Agoulis, Concord, 2022 ([ավտոտեֆերատ](#)).

[Հար2023] Մ. Հարությունյան. Արդի հայերենի լեզվաբանական ու ոճաբանական առանցքային հարցերը, Edit Print. Ե., 2023

[Զահ1969] Գ. Զահուկյան. Հայոց լեզվի զարգացումը եւ կառուցվածքը. Միտք, Ե., 1969:

[Զահ1974] Գ. Զահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Ե., 1974: